

**ՀՀ ՓՊ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ  
ՓԱՍՏԱԲԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

23.05.2016 11:20

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում մայիսի 20-ին տեղի է ունեցել ՀՀ ՓՊ փաստաբանի իրավունքների պաշտպանության հանձնաժողովի ընդլայնված կազմով նիստ, որին մասնակցել են համակարգող Կարեն Մեծլումյանը, անդամներ Արմինե Ֆանյանը, Լիանա Բալյանը և Արման Խաչատրյանը:

Նիստին ներկա է եղել ՀՀ ՓՊ արագ արձագանքման հանձնախմբի համակարգող Գևորգ Մկրտչյանը, Հանձնախմբի անդամ Արտակ Խաչատրյանը, ինչպես նաև դիմող փաստաբան Սուսաննա Սարգսյանը:

Հանձնաժողովն, ուսումնասիրելով Գևորգ Մկրտչյանի և Սուսաննա Սարգսյանի կողմից հանձնաժողովին ներկայացված նյութերը, պարզել է հետևյալը:

Փաստաբան Սուսաննա Սարգսյանը հանդիսանում է «Ալգա» իրավաբանական գրասենյակի հիմնադիրը և իր փաստաբանական գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Գայի պողոտա 2 շենքի 136 հասցեում, որն էլ նրա փաստաբանական գրասենյակն է:

Փաստաբան Սուսաննա Սարգսյանը 17.05.2016թ.-ին ՀՀ Հատուկ Քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Ստեփանյանին դիմում է հասցեագրել, որում նշվել է, որ Ա.Չ.-ն ցանկություն է հայտնել, որ թիվ 59103216 քրեական գործով իր շահերի պաշտպան ներգրավվի փաստաբան Սուսաննա Սարգսյանը:

18.05.2016թ.-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ստեփանյանի հետ փաստաբան Ս.Սարգսյանը այցելել է ՀՀ ԱՆ Արվյան ՔԿԿ և ներգրավվել թիվ 59103216 քրեական գործով մեղադրյալ Ա. Չ.-ի պաշտպան:

19.05.2016թ. ժամը 11:50-ին ք. Երևան Գայի պողոտա 2 շենքի 136 հասցեում գտնվող Սուսաննա Սարգսյանի փաստաբանական գրասենյակ են այցելել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Աշոտ Ժամկոչյանը և իրավապահ մարմինների աշխատակիցներ՝ Լևոն Կյուրեղյանն ու Լևոն Պետրոսյանը:

ՀԿԳ քննիչ Ա.Ժամկոչյանի կողմից ներկայացվել է ք. Երևան Գայի պողոտա 2 շենք 136 հասցեում խուզարկություն կատարելու վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը:

Համաձայն ներկայացված որոշման՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Ա. Դանիելյանը 16.05.2016թ. քննության առնելով ՀՀ Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն կազմակերպված պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ստեփանյանի՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը և դրան կից ներկայացված փաստաթղթերը, գտել է, որ միջնորդությունը հիմնավոր է ու ենթակա է բավարարման և ի թիվս այլնի խուզարկության թույլտվություն է տվել նաև Սուսաննա Սարգսյանի փաստաբանական գրասենյակի տարածքում, ամենայն հավանականությամբ չհմանալով և որոշման մեջ չնշելով, որ դա փաստաբանական գրասենյակի տարածք է:

Քննիչը ներկայանալով Երևան, Գայի պողոտա 2 շենքի 136 հասցեում գտնվող տարածք, պարզել է, որ այդտեղ է տեղակայված նույն գործով պաշտպան, փաստաբան Սուսաննա Սարգսյանի փաստաբանական գրասենյակը՝ «ԱԼԳԱ» իրավաբանական գրասենյակը, ինչի մասին քննիչին հայտնել է նաև Սուսաննա Սարգսյանը՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր:

Ծանոթանալով ներկայացված փաստաթղթերին և համոզվելով, որ նշված հասցեում գործում է փաստաբանական գրասենյակ, քննիչն այնուամենայնիվ պնդել է, որ պետք է կատարի խուզարկություն, քանի որ առկա է այդ հասցեում խուզարկություն կատարելու դատարանի թույլտվություն:

Փաստաբանական գրասենյակի տնօրեն, փաստաբան Սուսաննա Սարգսյանը ստեղծված իրավիճակում ստիպված է եղել դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և ՀՀ փաստաբանների պալատի արագ արձագանքման խմբի օգնությանը, որոնց միջամտությունից հետո նոր միայն քննիչը ետ է կանգնել փաստաբանական գրասենյակում խուզարկություն կատարելու պնդումից, չբացառելով, որ հետագայում հնարավոր է խուզարկությունն իրականացվի:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը փաստում է, որ ք. Երևան Գայի պողոտա 2 շենք թիվ 136 հասցեում խուզարկություն կատարելու որոշումը կայացվել է թիվ 59103216 քրեական գործով, որում փաստաբան Սուսաննա Սարգսյանը հանդիսանում է Ա.Չ.-ի պաշտպանը:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «*Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով*»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն.

«2. Արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

4. Փաստաբանը չի կարող հետապնդվել, պատասխանատվության և բերման ենթարկվել, ձերբակալվել, կալանավորվել կամ ենթարկվել իրավունքների այլ սահմանափակման իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ, ներառյալ՝ վարույթն իրականացնող և այլ մարմիններում հայտնած կարծիքի կամ դիրքորոշման համար:...

**6. Փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը կամ գրասենյակը, ինչպես նաև փաստաբանական կազմակերպության գրասենյակը չեն կարող խուզարկվել փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքները պարզելու կապակցությամբ: Չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս:**

**7. Փաստաբանի մոտ կամ փաստաբանական կազմակերպության գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և տեղեկատվական կրիչները (համակարգիչները, տեսաձայնագրող սարքերը, լազերային սկավառակները, տեսաժապավենները և այլն) անձեռնմխելի են, չեն կարող առգրավվել (վերցվել) և չեն կարող որպես ապացույց օգտագործվել»:**

**Իրավական նման երաշխիքների սահմանումը կոչված է ապահովելու փաստաբանների անկախությունը՝ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս:**

ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը ղեկավարվելով «Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության» Կարգի 2.13 և 2.14 կետերով,

որոշեց հանդես գալ հետևյալ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ.

- **«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված արգելքին հակառակ փաստաբանական գրասենյակի խուզարկությունը միջամտություն է փաստաբանի անկախությանը, հետևապես նաև՝ փաստաբանական գործունեությանը:**

- **Վստահորդի կողմից փաստաբանին հայտնած տեղեկությունների գաղտնիությունը վտանգող քրեական վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողությունն ապօրինի է, քանի որ սահմանափակում է փաստաբանական գործունեության օրենսդրական երաշխիքները:**

**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը դատապարտում է փաստաբան Սուսաննա Սարգսյանի փաստաբանական գրասենյակում խուզարկություն ձեռնարկած պաշտոնատար անձանց գործելաճը և ՀՀ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց հորդորում է զերծ մնալ փաստաբանական գործունեությանը որևէ կերպ ապօրինի միջամտելուց:**

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```